ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N3
ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/4-Ա ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ
ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 4 սեպտեմբերի 2017թ.

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Բալայանը,
Հանձնաժողովի անդամներ՝ Վ. Օհանջանյանը, Մ. Կարապետյանը և Հ. Սիրունյանը:
Քարտուղար՝ Ա. Սարգսյանը:

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը

Հանձնաժողովի նիստի օրակարգում քննարկվող հարցերն են՝

Մասնակցի կողմից որակավորման չափանիշները հիմնավորող <<ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/4-Ա>> ծածկագրով հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերի և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև <<ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/4-Ա>> ծածկագրով հրավերի 1-ին մասի 2.5 կետով նախատեսված՝ «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ եզրակացության քննարկման արդյունքները:

2. Մասնակիցների կողմից ներկայացված որակավորման պահանջները հիմնավորող փաստաթղթերի վերաբերյալ

<<Հիդրովերանորոգում>> ՍՊԸ-ի կողմից 31.08.2017թ. սահմանված կարգով ներկայացվել է որակավորման չափանիշները հիմնավորող <<ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/4-Ա>> ծածկագրով հրավերի 2-րդ մասի՝ հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը:

Ընկերությունների կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը համապատասխանում են նշված հրավերով սահմանված պահանջներին:

3. Գնահատման արդյունքների ամփոփման վերաբերյալ

- Մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև սույն հրավերի 2.3 կետի <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ հարցումը ներկայացվել է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե 29.08.2017թ.:

- 30.08.2017թ. ստացվել է համապատասխան եզրակացությունը /համապատասխանում է սահմանված չափանիշներին/:

- Մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի և գնահատման թերթիկների ադյունքների հիման վրա.

Հանձնաժողովը որոշեց.

ՀՀ Տավուշի մարզի Ներքին Ծաղկավան համայնքի 40 հա տարածք զբաղեցնող տնամերձերի ոռոգման ցանցի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով «ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/4-Ա» ծածկագրով ընթացակարգի առաջին տեղը զբաղեցրած Մասնակից՝ <<Հիդրովերանորոգում>> ՍՊԸ-ին հայտարարել ընտրված մասնակիցներ:

Ընտրված մասնակցին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Հրապարակել հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

4. Հանձնաժողովի հաջորդ նիստի վերաբերյալ

- Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ըստ անհրաժեշտության, ՀՀ ԷԵԲՊՆ ջրային տնտեսության պետական կոմիտեի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Վարդանանց 13ա:

Գնահատող հանձնաժողովի՝ Նախագահ	_____	Ա. Բալայան
անդամներ	_____	Վ. Օհանջանյան
	_____	Է. Մխիթարյան
	_____	Մ. Կարապետյան
	_____	Հ. Սիրունյան
Քարտուղար	_____	Ա. Սարգսյան